Ի ՍԷՐ «ՄԵԾԱՓԲԱՆՉ»-ԻՆ

21.

ՀԱՄՐԵԼ ԳԻՏԵ՞Ս

Ազգ մը կայ, կ'ըսեն, որ մինչեւ հինգ հազիւ կարող է համրել· անկէ անդին... անհունական հաշիւի սահմանը կը սկըսի իրենց համար: Երանի՛ իրենց:

Բայց մենք Հայերս այդպէս չենք· մենք մինչեւ... վեց դոնէ կրնանք հաշուել անսայթաք: Անկէ անդին... մեզի համար ալ, դժբախտաբար, կը սկսի Բաբելոնի սահմանը:

Եօթէն *մինչեւ* տասը՝ *արդէն իսկ ռազմադաշտ մըն է: Դիակներու վրայէն ցատկըրտելով՝ հազիւ կրնանք անցնիլ:*

Գրողներ կան. եօթ, եօթն, եօթը – ութ, ութն, ութը – ին, ինն, ինը – տաս, տասն, տասը:

Զորս թիւի համար, (7–10), *տասներկու ձեւ. ահա՛ւասիկ հայ լեզուի հարստութիւններէն մէկը...:*

Հարստութիւն չէ՛, սիրելի՛ ընթերցող, մի՛ խաբուիր. ասիկա հարստահարութիւն է՝ հայ լեզուին անարատ սրբութեան դէմ կատարուած:

Դժբախտաբար, անուշադրութեան հետեւանքով, ամէնքս ալ քիչ մը այս տեսակ հարստահարողներու դասակարգին կը պատկանինք:

Օր մը, քերականութեան ծանօթ դասագիրքի մը դիմեցի. բայի թուական ածականներու նուիրուած գլուխը. ի՜նչ տեսնեմ... մարդը զոհացեր է մինչեւ երեք հաշուելով: Նոյնը՝ բազմաթիւ ուրիշ քերականներու մէջ: Ոմանք, օրինակելի քաջութեամբ... մինչեւ հինգ կը բարձրանան, ու կը դնեն եւ այլն: Վրաս մաբելիք եկաւ:

Եւ սակայն, դժուարութիւնը կը սկսի ճիշտ ատկէ անդին:

* * *

Սկսինք գրաբարէն, ուր հարցը յստակ է եւ շատ կանոնաւոր: Գրաբարը կ'ըսէ. եօթն, ուրթ, ինն, տասն:

Ինչպէս կը նշմարէք, չորսէն երեքը՝ արմատական ն տառով կ'աւարտին:

Գրաբարի մէջ՝ արմատական ն–ով աւարտող բառերը, երբ կ'անցնին աշխարհաբարի բովէն, ընդհանրապէս կը կորսընցնեն ծայրագաւառի ն տառը: Այսպէս, գրաբարի կաթն, հարսն, մատն, անձն, *եւն... բառերը, աշխարհաբարի մէջ՝ եղած են* կաթ, հարս, մատ, անձ: *Սակայն, բարդութեան պարագային, այդ ն տառը դերեզմանէն կ'ելլէ ու տեսակ մը անդրերկրային անուշութիւն կ'ընծայէ նորապսակներուն. եւ ահա կ'ունենանք՝* կաթնապուր, հարսնամատ, մատնանիշ, անձնուրաց, *եւն...:*

Մեր ականջները, կարծէք, կը խրտչին՝ երբ լսեն կաթավանառ, հարսարան, մատացոյց, անձագոհ, լեռաշղթայ *բարդութիւնները, որոնք տափակ բան մը ունին: Մինչ՝ սահուն եւ անոյշ կը հնչեն միջամուտ ն տառով:*

* * *

Վերադառնանք մեր թիւերուն:

1. *Ոմանք կ'ըսեն.* եօթն, ինն, տասն *բառերու ծայրէն հանեցէք ն տառը, եւ կ'ունենաք անոնց աշխարհաբար ճշգրիտ ձեւերը՝* եօթ, ին, տաս (*ինչպէս* կաթ, հարս, մատ). *բարդութեան ընթացքին՝ ներս ընդունեցէք ն տառը, կազմելով* եօթներորդ, իններորդ, տասներորդ (*ինչպէս՝* կաթնեղբայր, հարսնեւոր, մատնագիր): *Իսկ* ուրթ–ը *կը մնայ անփոփոխ, առանց ն–ի, ինչպէս գրաբարի մէջ, նոյնպէս նաեւ աշխարհաբարի մէջ.* ուրթ – ուրթերորդ:

2. *Սակայն, հարկ է նկատել՝ որ հայ ժողովուրդը, ականջի երաժշտականութեան պահանջէն տարուած,* եօթն – ինն – տասն *բառերու ծայրէն ն գիրը հանելու*

առեն, անոր տեղ՝ կակուղ ը մը դրած է. երեւոյթ մը՝ որ չենք կրնար անտեսել: Մալխասեան անդամ որդեգրած է զայն՝ իր բառարանին մէջ:

3. *Ժողովուրդը՝ համրելու առեն՝ կ'ըսէ.* եօթը – ինը – տասը. *նոյնիսկ* ուրթ–ին *ծայրն ալ կակուղ ը մը կը դնէ, եւ կ'ըսէ* ուրթը. *կ'ունենանք միօրինակ շարք մը՝ վեցէն անդին.* եօթը – ուրթը – ինը – տասը: *Արդարեւ, շատ գործածական է* ուրթը (*այսպէս՝ ը–ով*). *Մալխասեանի բառարանէն կը քաղենք հետեւեալ օրինակները.* ուրթը *հաւկիթ գնեցի,* ուրթն *ալ հոտած գալեան.* ուրթը *հոգի էին՝ երբ զինուոր գացին,* եօթը *միայն վերադարձան:*

4. *Այս ը տառը, ուրեմն,* եօթը – ինը – տասը *բառերուն մէջ՝ կը փոխանակէ գրաբարի արմատական ն տառը* (ուրթը *բառին մէջ՝ միւսներուն նմանութեամբ կը մըտնէ). կ'անհետանայ հոլովումի առեն. կ'ըլլան* եօթի(ն), ուրթի(ն), տասի(ն), եօթէ(ն) *եւն...: Տակաւին ըսողներ կան՝* եօթնի, տասնի, *նոյնիսկ՝* ուրթնի (?). *սակայն, ասոնք աւելի բարբառային ձեւեր են՝ քան մաքուր գրական: Իսկ բարդութեան առեն՝ դարձեալ երեւան կ'ելլէ, աշխարհաբարի ընդհանուր օրէնքին համաձայն, ն տառը. որով կ'ունենանք՝* եօթներորդ, իններորդ, տասներորդ, եօթնական, տասնական, տասնապատիկ, տասնեակ:

5. Ինը *թիւը անդրադարձն բացառութիւն մը ունի. հոլովումի առեն ալ կը պահէ մը արմատական ն տառը, և կ'ըլլայ* ինն(ի), ինն(է), ինով. *բնականաբար՝ յետոյ նաեւ* իններորդ, ինական *եւն...*

6. *Միւնոյն ը տառը յաճախ ն–ի կը փոխուի (հին ձեւը կը վերակենդանանայ), երբ յաջորդէ ձայնաւորով սկսող բառ մը. օրինակ՝* եօթն օր, եօթը գիշեր. եօթն անգամ. *բայց կ'ըսուի նաեւ տասը* օր, եօթը անգամ, ինը առաւել...:

7. *Ժամանակ ցոյց տալու համար՝ սովորաբար ն յօդը կը կիրարկենք. ժամը* մէկն է, վաղը՝ ամսուն հինգն է, Յունուարի վեցին կու գամ: Եօթը – ինը – տասը *թիւերուն վրայ՝ երբ աւելցնենք այդ յօդը՝ կ'անյայտանայ ծայրավերջի նորամուտ ը տառը, եւ կ'ըլլայ ժամը* եօթն է, ինն է, տասն է, ամսուն եօթին, տասին (*բացառիկ իր ձեւով՝* ինինին), *ինչպէս վերեւ ըսինք):*

8. *Ո՞ւր մնաց խեղճ* ուրթը. *ասիկա, ինչպէս ըսինք, գրաբարի մէջ չունի ծայրի ն տառը. կը գրուի պարզապէս* ուրթ. *ու եթէ նոյնիսկ, իր ընկերներուն նմանցնելու համար, աշխարհաբարի մէջ ը–ով զգեստաւորենք, բարդութեան առեն՝ իրաւունք չունինք միջամուտ ն մը չալկեցնելու. ուստի, երբ բացառութիւն իր շարքին, պիտի ըլլայ* ուրթերորդ, ուրթական *եւն... առանց ն–ի:*

9. ԵԶՐԱԿԱՑՆԵԼՈՎ.

Բացարձակ թուականի համար՝ եօթը – ուրթ(ը) – ինը – տասը:

Հոլովումի առեն՝ եօթի(ն), ուրթի(ն), ինի(ն), տասի(ն):

Բարդութեան առեն (դասական եւն...), եօթներորդ, ուրթական, ինական, տասնապատիկ *եւն...:*

10. Մէկ *թուականը, որ հոլովուելով կ'ըլլայ* մէկի(ն), (*ժամը* մէկին, ամսուն մէկին, մէկին *բառորդ կայ), երբ կ'առնուի իբր անորոշ դերանուն՝ հոլովուելու առեն կ'ըլլայ* մէկու(ն). (մէկու մը տուի, մէկուն չըսես):

Իսկ երկու թուականը, շատ կը վախնայ՝ հոլովուելու եւ բարդուելու առեն վրան աւելցող ձայնաւորներէն, ինչպէս նաեւ ու եւ ալ չաղկապներէն. ուստի, կ'երթայ գրաբարի իր հին վահանը կ'առնէ (Ի յոգնակակերտ տառը), եւ կ'ըլլայ երկուքի(ն), երկուքէ(ն), երկուքով, երկուքնոց, երկուքական (*կայ նաեւ* երկուական, երկուորեակ) *եւն...:*

Եւ հասանք մինչեւ տասը:

Հ· ՆԵՐՍԷՍ ՏԷՐ–ՆԵՐՍԷՍԵԱՆ

© National Library of Armenia